ՀԱՀ Սպառողների վստահության համաթիվ

Սպառողների վստահությունը 2023թ. չորրորդ եռամսյակում որոշակիորեն աճել է:

Սպառողների գհահատականներն ընթացիկ տնտեսական իրավիճակի վերաբերյալ բարելավվել են: Այդուհանդերձ սպառողները լավատես չեն տնտեսության կարճաժամկետ հեռանկարների վերաբերյալ:

ՀԱՀ Սպառողների վստահության համաթիվը 2023 թվականի չորրորդ եռամսյակում նախորդ եռամսյակի համեմատ աճել է մոտ 2 միավորով: Այն ներկայումս կազմում է 117.5 միավոր (վերջինիս արժեքը 2021 թվականի չորրորդ եռամսյակում 100 է): Բարելավումը պայմանավորված է բացառապես Ներկա իրավիճակի համաթվով: Վերջինս նախորդ եռամսյակի համեմատ աճել է շուրջ 3.3 տոկոսով: Այս աճը հիմնականում պայմանավորված է սպառողների կողմից երկարաժամկետ օգտագործման ապրանքների գնումներով. գնումներ կատարելու վարքագիծը բնութագրող ենթահամաթիվը նախորդ եռամսյակի համեմատ աճել է 10 տոկոսով: Այդուհանդերձ պետք է արձանագրել, որ այս վարքագիծը մասամբ կարող է պայմանավորված լինել ամանորյա տոներին ընդառաջ տնային տնտեսությունների առավել շատ ծախսեր կատարելու հակվածությամբ (գնումներ կատարելու ենթահամաթվի աճը նախորդ տարվա նույն եռամսյակի նկատմամբ կազմում է մոտ 6,8 տոկոս): Ապագա իրավիճակի համաթիվը նվազել է մոտ 0,8 տոկոսով: Սպառողներն առավել հոռետես են դարձել ապագա ֆինանսական վիճակի և զբաղվածության պայմանների վերաբերյալ: Միաժամանակ պետք է փաստենք, որ ապագա գնումների դինամիկան կայուն է:

Սպառողների վստահության հաշվեկշռի միավորը բացասական է: Թե՛ Ներկա իրավիճակի, թե՛ Ապագա իրավիճակի մնացորդը գտնվում է 0,45-0,55 կայունության միջակայքից ցածր: Կարճաժամկետ ֆինանսական հեռանկարների և զբաղվածության պայմանների վերաբերյալ կարծիքների հաշվեկշիռը դրական է: Միաժամանակ նշենք, որ հարցվածներն ընդհանուր առմամբ խոշոր գնումներ կատարելու տրամադրվածություն չունեն:

Գծապատկեր 1. Սպառողների Վստահության Համաթվի փոփոխությունը



Գծապատկեր 2. ՍՎՀ բաղադրիչների փոփոխությունը նախորդ ժամանակահատվածի նկատմամբ



Գծապատկեր 3. Սպառողների վստահության հաշվեկշիռ



Գծապատկեր 3-ն արտացոլում է սպառողների վստահության հաշվեկշռի վեց բաղադրիչների արժեքները և համապատասխան կայունության միջակայքերը՝ ներկայացված ստորին և վերին հավասարակշռության սահմանագծերով: Ստորին սահմանագծից ներքև և վերին սահմանագծից վերև գտնվում են համապատասխանաբար հոռետեսական և լավատեսական գնահատականները:

Սպառողների վստահության հարցման մեթոդաբանություն

Սպառողների վստահության հարցումն արտացոլում է սպառողների տեսակետներն ընթացիկ և ապագա տնտեսական իրավիճակի և հաջորդ եռամսյակի հավանական զարգացումների վերաբերյալ: Հարցման պատասխաններից դուրս բերված համամասնությունները հիմնված են սպառողի սուբյեկտիվ գնահատականների, ինչպես նաև ընթացիկ և ապագա գնումների վարքագծի վրա:

Սպառողների վստահության հետազոտությունը կազմվել է միջազգայնորեն ընդունված մոտեցման միջոցով, որը միավորում է երկու ենթահաշիվներ՝ ներկա իրավիճակի հաշվեկշիռ (հիմնված տնային տնտեսությունների կողմից իրենց ընթացիկ ֆինանսական վիճակի, գնումների վարքագծի, երկրի ներկայիս տնտեսական պայմանների գնահատման վրա) և ապագա ակնկալիքների հաշվեկշիռ (հիմնված սպառողների՝ կարճաժամկետ հեռանկարում ֆինանսական իրավիճակի ապագա ֆինանսական վիճակի, գնումներ կատարելու մտադրությունների և աշխատաշուկայի պայմանների համար): Հետագա եռամսյակային միավորների փոփոխություններն այնուհետև ներկայացվում են որպես Սպառողների վստահության համաթիվ: Մեթոդաբանության տեղայնացման գիտական փորձարկումից հետո ՀԱՀ-ի Փոլ Ավետիսյան անվան Գործարարության հետազոտությունների և զարգացման կենտրոնը 2022 թվականից հարցումներ է հրապարակում Հայաստանում սպառողների ազգային ներկայացուցչական խմբին (պանելին) եռամսյակային սպառողների դինամիկ Սպառողների վստահության համաթվի հրապարակման համար: Հարցումները կատարվում են հեռախոսով՝ պանելի 2000-ից ավելի մասնակիցներից, որոնք ներկայացուցչական են ՀՀ համար սեռատարիքային և տարածքային (այդ թվում՝ գյուղական և քաղաքային բնակչության) տեսակետից: Որպես բազային արժեք մենք ընտրել ենք Սպառողների վստահության հաշվեկշիռը 2021 թվականի չորրորդ եռամսյակում:

Հարցերի համար, խնդրում ենք այցելել https://cbe.aua.am/cbrd/# , ինչպես նաև զանգահարել **+374 60 61 2607** հեռախոսահամարով: